

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

25.02.2019թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյան - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ա.Բեջանյանը, Ա.Մխիթարյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Շահվերդյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Աղլոյանը, Ս.Ղուբաթյանը, Հ.Հակոբյանը, Ա.Եղիազարյանը, Հ.Մկրտչյանը - ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյան - մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյան - մարզպետի խորհրդական
- Ռ.Խանզադյան - մարզպետի օգնական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Ջեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. **ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին՝**

ա) Վերադասից ստացված հանձնարարականների վերաբերյալ, ինչպես նաև վերադասին ուղղված առաջարկությունները նախապես քննարկել մարզպետի հետ, որի արդյունքում ներկայացնել վեջնական տարբերակը:

բ) Ստորաբաժանումներում քննարկել աշխատակիցների աշխատանքային ծանրաբեռնվածությունը և անհրաժեշտության դեպքում փոփոխությունների վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

2. **ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին,**

մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի պարտականությունները կատարող Ա.Շահվերդյանին՝

Անհրաժեշտ վերահսկողություն սահմանել մարզի համայնքների ղեկավարների և անասնաբուժերի միջև կնքված պայմանագրերով նախատեսված գործառույթների իրականացման նկատմամբ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Ա.Մխիթարյանին՝

Համատեղ քննարկումներ իրականացնել համապատասխան ստորաբաժանումների հետ մարզում փախստականների բնակապահովման հարցերը լուծելու վերաբերյալ և ներկայացնել առաջարկություններ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

«Մաքուր Հայաստան» ծրագրի շրջանակներում նախատեսված շաբաթօրյակի հետ կապված հարցերով համայնքների ղեկավարների և շահագրգիռ անձանց մասնակցությամբ կազմակերպել խորհրդակցություն և այն նախատեսել անցկացնել մինչև ս/թ մարտի 10-ը:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Հ.Հակոբյանին՝

Հավաքագրել «Իմ քայլը հանուն Լոռու մարզի» ֆորումի հետ կապված ամբողջ տեղեկատվությունը, գույքագրել, արխիվացնել և անհրաժեշտ տեղեկատվությունը տեղադրել մարզպետարանի կայք-էջում:

 Invalid signature



ԱՆՌԵՑ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան

Հեռ. 0322 /4-32-99/